

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԵՐԻ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԽՈՍՔԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Քրիստինա Ռշտունի

Հայաստանի պետական մանկավարժական համալսարան

Սույն հոդվածում խնդիր է դրվում պարզել, թե ինչ յուրացման մեխանիզմներ են գործում նախադպրոցականների օտարալեզու խոսքային կարողությունների ձևավորման գործընթացում: Բացահայտվում են խոսքային և ոչ խոսքային արտահայտչամիջոցների, հարալեզվական միջոցների ուսուցման առանձնահատկությունները, հաշվի առնելով այն հազամանքը, որ երկրորդ կամ երրորդ օտար լեզուն նախադպրոցականները յուրացնում են, ունենալով լեզվակիրների հետ շփվելու սահմանափակ հնարավորություններ:

Նույն տրամաբանական հարթության վրա է դիտարկվում բնագրերի կիրառման նպատակահարմարությունը, քանի որ նույն հեքիաթը կամ պատմվածքը լեզվակիր նախադպրոցականը լսում է, ունենալով համապատասխան հաղորդակցական կարողություններ: Որպես փոխհատուցման ռազմավարություն առաջարկվում են իրական, լեզվակիրներին բնորոշ խոսքային իրադրությունների վերարտադրման ինտերակտիվ, խաղային տեխնոլոգիաներ:

Քննության առարկա են դառնում ծանոթ և անծանոթ, ենթատեքստային խոսքային իրադրությունների ստեղծման կամ վերարտադրման, ինչպես նաև միջլեզվային ռազմավարությունների կիրառման հիմնախնդիրները:

Բանալի բառեր. երկլեզվություն, հաղորդակցական կարողություն, խոսակցական լեզվակաղապար, հարալեզվական միջոց, բնագիր տեքստ, լեզվական ունակություն, արտաիրադրային, արտատեքստային, մենախոսություն, երկխոսություն, կապակցված բանավոր խոսք, լեզվական մակարդակ, կարծրատիպային արտահայտություն, կողմփոխարկում, դրդապատճառ:

Ներածություն

Անգլերեն բանավոր խոսքի ուսուցման նախադպրոցական դասընթացը կարևորվում է ժամանակակից մեթոդիստների կողմից, քանի որ այն հիմք է դնում երկրորդային լեզվական անձի ձևավորման, և եթե այն կազմակերպվում է համապատասխան մակարդակում, ապա ձևավորվում են երկլեզու, եռալեզու անձինք: Ընդ որում, օտար լեզուն յուրացվում է համադաս երկլեզվության մակարդակում: Նախադպրոցական տարիքում բանավոր խոսքի ուսուցումը

նպաստում է համապատասխան արտասանական, արտաբերական կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Ունենալով լավ մեխանիկական հիշողություն, վառ երևակայություն, երեխաներն այդ տարիքում բավականին արագ են յուրացնում անգլերենի հնչյունական համակարգի առանձնահատկությունները:

Վաղ տարիքում օտար լեզու սովորելու օգտակարության և արդյունավետության կողմ են արտահայտվել Լ.Ս. Վիգոտսկին. Ջ. Բրուները, Թ. Էլիոտը և այլք:

Օտար լեզու սովորելը դրական է ազդում նախադպրոցականների լեզվական, ճանաչողական, հաղորդակցական կարողությունների ձևավորման վրա, ընդլայնում նրանց մտահորիզոնը: Նրանք կարողանում են ճանաչել ուսումնասիրվող լեզվի երկիրը, նրա մշակույթը, ժողովրդին:

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող դաստիարակուսուցիչը խոսքային հաղորդակցական ավելի լավ ունակություններ պետք է ունենա, քան ավելի ավագ տարիքի երեխաների հետ աշխատող մանկավարժը, քանի որ, եթե նախադպրոցական անգլերենի ուսուցիչը կատարելապես չի տիրապետում անգլալեզու նախադպրոցական տարիքի երեխաների կողմից գործածվող լեզվակաղապարներին, ապա հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի:

Խոսակցական լեզվակաղապարների ուսուցման հիմնախնդիրը

Խոսակցական լեզվակաղապարների ուսուցման հիմնախնդիրն իր արդիականությունը երբեք չի կորցնում: Հնարավոր չէ պատկերացնել հաղորդակցության որևէ ոլորտ՝ առանց խոսակցական լեզվակաղապարների իմացության, դրանց ճիշտ և տեղին գործածման: Խոսքային կաղապարները արտացոլում են տվյալ լեզվակիրների մշակույթի, գիտության, տնտեսության և կենսագործունեության այլ ոլորտների բոլոր փոփոխությունները:

Առանցքային նշանակություն ունի ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային արտահայտչամիջոցների, հարալեզվական միջոցների ուսուցման հիմնախնդիրը: Անգլալեզու երեխաները յուրացնում են որոշակի ոչ խոսքային արտահայտչամիջոցներ՝ ժեստեր, շարժումներ, դիմախաղ և այլն, որոնք պետք է հասկանան և գործածեն իրենց խոսքի մեջ հայալեզու երեխաները: Այս առումով նույնպես ուսուցիչների պատրաստման հարցը նոր մեթոդաբանական հիմքերի վրա է դրվում:

Ինչպես հայտնի է հաղորդակցական մեթոդիկայից, անհրաժեշտ է բառապաշարի ուսուցումն իրականացնել ոչ միայն բնագրերի, այլև իրական, լեզվակիրներին բնորոշ իրադրությունների վերարտադրմամբ:

Արդի փուլում օտար լեզուների դասավանդման տեխնոլոգիաները շատ ա-
րագ են զարգանում: Ինչ վերաբերում է նախապրոցականների օտարալեզու
բանավոր խոսքային կարողությանների ձևավորման տեխնոլոգիաներին, ա-
պա դրանք նույնպես զարգանում են մեծ արագությամբ: Դա պայմանավոր-
ված է տարբեր ուսումնական և արտաուսումնական գործոններով:

Անհրաժեշտ է նշել, որ մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ կա-
նայք իրենց զբաղվածությամբ չեն զիջում տղամարդկանց: Նրանցից շատերը
շարունակում են աշխատել ծննդաբերության առաջին տարին: Երեխաների
դաստիարակության գործը նրանք հանձնում են իրենց տուն հրավիրված կա-
նանց, որոնցից շատերը չունեն համապատասխան կրթություն: Շատ դեպքե-
րում, սակայն, հրավիրվում են օտար լեզու իմացող մասնագետներ, ովքեր
դեռևս մանկիկության շրջանում սկսում են հաղորդակցվել երեխաների հետ
մայրենի և օտար լեզուներով:

Փաստորեն, շատ երեխաներ իրենց մայրենի լեզուն սկսում են սովորել ա-
վելի շատ դայակներից, քան մայրերից: Հետագայում նրանք հաճախում են
մասնավոր կամ հանրակրթական նախակրթարան, որտեղ նույնպես երեխա-
ները սկսում են սովորել օտար լեզուներ՝ խաղերի, գրույցների, մուլտիպլիկա-
ցիոն ֆիլմերի միջոցով: Լինում են դեպքեր, երբ դաստիարակը կամ դայակը
միայն օտար լեզուներով է հաղորդակցվում, ինչպես դա ընդունված էր Յարա-
կան Ռուսաստանում (դայակները հաղորդակցվում էին հիմնականում ֆրան-
սերեն), ԽՍՀՄ-ում (ռուսալեզու մանկապարտեզները մեծ տարածում ունեին
բոլոր խորհրդային հանրապետություններում), Հնդկաստանում (նախակրթա-
րանի լեզուն բարձր խավի շրջանում միայն անգլերենն է):

Նախադպրոցականների խոսքային կարողությունների զարգացման մեթո-
դիկա մշակելիս կարևորվում են այն տեսությունները, որոնք դիտարկում են
խոսքը հաղորդակցման և շփման համատեքստում:

Ըստ Ա.Ա. Լեոնտևի՝ երեխան իր խոսքի մեջ ոչ միայն նմանակում է մեծա-
հասակներին, այլև սերում է լեզվական արտահայտություններ: Խոսքի զար-
գացումը նախ և առաջ շփման եղանակի զարգացում է (Леонтев 1974:321):

Օտարալեզու խոսքի ուսուցման մեթոդիկա մշակելիս անհրաժեշտ է հաշվի
առնել այն հանգամանքը, որ հայալեզու նախադպրոցականները չեն շփվում
լեզվակիր անգլախոսների հետ: Նրանց ընտանիքներում անգլերեն լեզվով
հաղորդակցվող ծնողներ և ազգականներ հազվադեպ են հանդիպում:

Յուրացնելով հայալեզու միջավայրի շփման եղանակներն ու մեխանիզմ-
ները մինչև 4-5 տարեկանը, թե՛կրտսեր, թե՛ավագ նախադպրոցականները
դժվարությամբ են սովորում այն լեզվակաղապարությունները, որոնք բնորոշ են
անգլալեզու նախադպրոցականների խոսքին: Այդ առումով կարևոր է այն, թե
ինչ դեր է կատարում լեզվական ունակությունն առաջին և երկրորդ (երրորդ)

լեզուները սովորելիս: Ակնհայտ է, որ լավ զարգացած լեզվական ունակությունը վճռորոշ դերակատարություն ունի թե՛ առաջին, թե՛ երկրորդ լեզուն յուրացնելիս: Ասվածը հաստատում է նաև Հումբոլտը, ով առաջին պլան է մղում «լեզվական ունակություն» հասկացությունը: Ըստ նրա՝ «երեխաների կողմից լեզվի յուրացումը բառերի նմանակող, թոթովող կրկնություն չէ, այլ տարիների ընթացքում վարժություններով լեզվական ունակության աճ: Այն լեզվի մեխանիկական սերտում չէ, և ոչ էլ լեզվական ունակության դրսևորում» (Гумбольдт 1984:78):

Խոսքային միջավայրի դերը նախադարձականների բանավոր խոսքի զարգացման գործում

Երեխայի խոսքի զարգացման համար կարևոր է, որ խոսքային միջավայրը կամ շրջապատն ունենան բավարար զարգացնող հնարավորություններ (Федоренко 1973:6):

Խոսքի բովանդակությունը, ըստ Ուշակովայի՝ հասկանալի է գրուցակցին միայն այն դեպքում, եթե նա ծանոթ է իրադրության հետ, որի մասին երեխան պատմում է: Հետագայում երեխայի խոսքը դառնում է ենթատեքստային: Այսինքն՝ այն կարելի է հասկանալ որոշակի շփման ենթատեքստում: Այն պահից, երբ երեխայի խոսքը հնարավորինս կարող է լինել արտահարադրային և արտատեքստային, համարվում է, որ նա տիրապետում է խոսքային կարողությունների նվազագույնին (Ушакова 2001:21):

Գիտնականները նշում են խոսքային կարողությունների զարգացման ևս մի ուղի, երբ երկխոսական խոսքից անցնում են մենախոսական խոսքի: Ինչպես հայտնի է, երկխոսությունը մեծամասամբ իրադրային է և ենթատեքստային: Նրան բնորոշ են կրկնությունները և զեղչված արտահայտությունները: Ընդհանուր առմամբ, այն լավ կազմակերպված չէ: Մեծ դեր են խաղում այստեղ կաղապարայինները և շաբլոնները, սովորական ռեպլիկները և բառակապակցությունները:

Մենախոսությունը խոսքի ծավալվող տեսակ է: Այն կամածին է: Խոսողն ունի բովանդակությունն արտահայտելու դիտավորություն, ուստի պետք է ընտրել այդ բովանդակության համար համարժեք լեզվական ձև և դրա հիման վրա կառուցել արտահայտությունը: Մյուս կողմից՝ մենախոսությունը հրապարակային խոսք է: Խոսողը ծրագրավորում է ոչ միայն ամեն մի առանձին արտահայտությունը, այլև ամբողջ խոսքը, մենախոսությունը՝ ամբողջությամբ: Երկխոսությունը դիտարկվում է որպես լեզվական շփման նախնական բնական ձև: Դրան բնորոշ են այնպիսի ձևեր, ինչպիսիք են հարցը, պատասխանը, լրացումը, մեկնաբանությունը, տարածումը, հակաճառելը, խոսքային վարվեցողության բառերը, ռեպլիկների կառուցողական կապերը: Ըստ լեզվա-

բանների՝ խոսքի ձևավորման նախնական շրջանում մեծ դեր է խաղում մակրոդասիաները: Ինչպես նշում է Վիգոտսկին. «խոսքային շփման դրոստապատճառը զարգանում է մանուկի զարգացման ընթացքում և խոսքի սերման կարևոր նախադրյալ է: Եթե այդ նախադրյալը չի հասունացել, դիտարկվում է խոսքի զարգացման հապաղում» (Виготский 1982:238):

Նախադպրոցականների բանավոր խոսքի ձևավորման տեսանկյունից կարևոր է այն, որ կապակցված բանավոր խոսքը, ի տարբերություն երկխոսական խոսքի (զրույց, հարց ու պատասխան), բնույթով մենախոսություն է և դրանով պայմանավորված՝ պահանջում է նախնական պատրաստություն:

Ակնհայտ է, որ բանավոր խոսքը և խոսողությունը բովանդակային առումով իրարից քիչ են տարբերվում: Բանավոր խոսքը սերվում է խոսելու ընթացքում: Կրկնությունը բանավոր խոսքի կարևոր բնութագիր է: Բացի բառային կրկնությունից՝ շղթայական կապի միջոցներ են դերանունները կամ հոմանիշային փոխարինումը:

Շատ քիչ երեխաներ են սովորում առաջին և երկրորդ լեզուները հավասարապես՝ այնպիսի պայմաններում, երբ մի լեզուն մյուսի նկատմամբ գերակա չէ: Իրավացի է Գոլդշտայնը, երբ նշում է, որ անհավասար պայմաններում (երբ երեխաների մի մասի ընտանիքներում խոսում են թիրախ լեզվով, իսկ մյուս մասը թիրախ լեզուն ուսումնասիրում է միայն կրթական հաստատությունում) երեխաները կարող են օտար լեզուն յուրացնել հավասարապես (Goldstein 2004): Հարց է ծագում՝ իսկ հնարավո՞ր է խոսել օտարալեզու բանավոր խոսքի զարգացման մասին, և եթե այո, ապա՞ ո՞ր տարիքում:

Ակնհայտ է, որ ընտանիքում յուրացնելով երկրորդ կամ երրորդ լեզվից գիտելիքներ, երեխան հաջողությամբ է դրանք զարգացնում նախակրթարանում:

Կողափոխարկման փուլերը

ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և այլ անգլալեզու երկրներում նախակրթարաններում սովորող երեխաների համար նախատեսված են լեզվական մակարդակներ՝ beginning level, elementary level, advanced level: Ջեյեդան նշում է, որ սկսնակի կամ նախնական մակարդակից (beginning level) միջին մակարդակ (middle level) անցնելիս, երեխաները սկսում են գործածել արտահայտիչ լեզվական նշույթներ, ինչպես օրինակ՝ “one more” կամ “kookit” (Zepeda 2008): Բառապաշարի հարստացման հետ մեկտեղ, նրանք կապակցում են բառերը և խոսում են դարձվածքներով: Նրանք սկսում են գործածել հապավումներ և կարծրատիպային արտահայտություններ: Հատկանշական է այն, որ այդ ընթացքում նրանք դեռևս գործածում են մայրենի լեզուն և ժամանակ առ ժամանակ անգլերեն արտահայտություններ են կիրառում: Նախադպրոցականների բանավոր խոսքային կարողությունների զարգացման

գործում մեծ նշանակություն ունի կոդափոխարկումը (code-switching) (Bhatia & Ritchie 1991, 2008), որի տարատեսակ է միջլեզուն (interlanguage):

Ըստ Սելինկերի՝ միջլեզուն ռազմավարություն է, որով երկլեզու խոսողը, ով լավ չի տիրապետում երկրորդ լեզվին, փորձում է գործածել այն կրճատման, պարզեցման, փոխակերպման, փոխարինման և բաշխման միջոցով (Selinker 1972): Գուրանը տարբերակում է կոդափոխարկումը և միջլեզուն, պնդելով, որ միջլեզուն բնորոշ է լեզվի յուրացման նախնական, իսկ կոդափոխարկումը՝ միջին և ավարտական փուլերին (Duran 1994:71):

Որոշ ամերիկյան մեթոդիստների շրջանում տարածված է այն կարծիքը, որ ավանդական ուսուցման պայմաններում երեխաները անհրաժեշտ կամ բավարար արդյունքների չեն հասնում: Ըստ այդմ, ոչ ուսումնական մեթոդները (non-academic methods), ինչպես օրինակ՝ խաղը կամ հետազոտական աշխատանքն ավելի արդյունավետ են, քան դասարանային պայմաններում բառապաշարի շուրջ աշխատանքը:

Գիտնականները շեշտադրում են երեխաների նախաձեռնությունը (child-initiated learning) և պնդում են, որ բառապաշարի շուրջ ավանդական աշխատանքի ձևը չի ձևավորում անհրաժեշտ դրդապատճառներ:

Եզրակացություն

Անգլերենի բանավոր խոսքի ուսուցման նախադպրոցական դասընթացը պետք է հիմք դնի երկրորդային լեզվական անձի ձևավորմանը, քանի որ զարգացած եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում բավականին լավ հիմքերի վրա է դրված երկլեզու, եռլեզու անձանց ձևավորման հիմնախնդիրը:

Այդ համատեքստում առաջին պլան են մղվում նախադպրոցականների մտահորիզոնը, հենքային գիտելիքները ընդլայնելու միջոցով նրանց հաղորդակցական կարողությունները ձևավորելու և զարգացնելու հիմնախնդիրները:

Բնագրերի և իրական լեզվական իրադրությունների մոդելավորմամբ անգլերենի ուսուցման համատեքստում անհրաժեշտ է մշակել ծանոթ և անծանոթ, ենթատեքստային խոսքային իրադրությունների ստեղծման կամ վերարտադրման ընթացակարգեր, չնայած որոշ հետազոտողներ պնդում են, որ նշված տարիքում օտարալեզու խոսքը արտափրադրային և արտատեքստային է:

Նշված համատեքստում այլ բովանդակային բնութագրեր է ձեռք բերում նախադպրոցականների երկխոսական և մենախոսական խոսքի ուսուցման հիմնախնդիրը:

Մեծ Բրիտանիայի և այլ անգլալեզու երկրների մեթոդական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ՀՀ-ում գործող նախակրթա-

րաններում ներմուծել երեխաների լեզվական մակարդակները որոշելու սանդղակներ, լեզվի ուսուցման խմբերը ճիշտ ընտրելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bhatia, T. & Ritchie, W. (1999) *The Bilingual Child: Some Issues and Perspectives*. // Handbook of Child Language Acquisition. / Ed. by T. Bhatia & W. Ritchie, pp. 569-643. San Diego: Academic Press.
2. Bhatia, T. & Ritchie, W. (2008) *The Bilingual Mind and Linguistic Creativity*. // Journal of Creative Communications. Vol. 3(1), pp. 5-21.
3. Duran, L. (1994) *Toward a Better Understanding of Code-Switching and Interlanguage in Bilinguality: Implications for Bilingual Instruction*. // The Journal of Educational Issues of Language Minority Students. Vol. 14, pp. 69-88.
4. Goldstein, B. (2004) *Bilingual Language Development and Disorders: Introduction and Overview*. // Bilingual Language Development and Disorders. / Ed. by B. Goldstein, pp. 3-20. Baltimore, MD: Paul H. Brookes Publishing Co.
5. Selinker, L. (1972) *Interlanguage*. // International Review of Applied Linguistics. Vol. 10, pp. 209- 231.
6. Zepeda, M. (2008) *California Preschool Learning Foundations: Foundations in English Language Development*. California Department of Education: Sacramento: CA.
7. Выготский, Л.С. (1982) *Мышление и речь*. // Собр. соч. в 6-ти томах. Т. 2, . сс. 6-361. М.: Педагогика.
8. Гумбольдт, В. фон (1984) *Избранные труды по языкознанию*. М.: Прогресс.
9. Леонтьев, А.Н. (1974) *Общее понятие о деятельности [Текст]*. // Основы теории речевой деятельности. М.: Наука.
10. Ушакова, О.С. (2001) *Развитие речи дошкольников*. М.: Изд-во Института Психотерапии.
11. Федоренко, Л.П. (1973) *Принципы обучения русскому языку*. М.: Просвещение.

The Problem of Developing Foreign Language Speech Skills of Preschool Children

This article focuses on the mechanisms of forming speech abilities of preschool children learning English from different methodological positions. It reveals the peculiarities of verbal and non-verbal means of communication, in terms of limited possibilities of contact of Armenian preschool children with native English speakers.

From this perspective the article deals with the problem of selecting authentic texts, such as fairy tales and stories, as a productive means of developing foreign-language speech competence of preschool children, as well as compensation strategies to use interactive, gaming technologies in order to develop target oral speech.

Проблема развития иноязычных речевых умений у дошкольников

В данной статье с разных методологических позиций рассматриваются механизмы формирования умений иноязычной устной речи у дошкольников, изучающих английский язык. Выявляются особенности обучения вербальным и невербальным средствам коммуникации с учетом ограниченных возможностей общения дошкольников-армян с носителями языка.

С этой точки зрения рассматривается проблема отбора аутентичных текстов, в частности сказки и рассказа, как продуктивного средства развития иноязычной устной речи у дошкольников. Предлагаются стратегии компенсации с использованием интерактивных, игровых технологий в целях развития иноязычной устной речи.